ԲՈՍՖՈՐԻ ԱՓԵՐՈՒՄ

(Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

Ա

ՁԻԱՔԱՐՇԻ ՄԷՋ

Աշնան մի երեկոյ, երբ ձիաքարշը Կ. Պոլսի ասիական ափի Դիւան-եօլից դէպի կամուրջն էր գնում, Կէտիկ-փաշայի դլխին կանգնած մի երիտասարդ փայտով նշան արեց կառապանին, կանգնեցնել տուեց վագոնը, առաջնորդեց դէպի նա մի օրիորդի, օգնեց նրան ներս մտնել և ինքն էլ ցատկելով հետևեց նրան։

Լեոնը և Վիրժինն էին դոքա—եղբայր և քոյր, որոնք թատրոն էին գնում, որովհետև երկար տարիներից յետոյ, առաջին անգամն էր, որ Խիզանի ուսումնասիրաց ընկերութիւնը մեծ դժուարութեամբ հրաման ձեռք բերելով, հայերէն լեզուով մի ներկայացում էր տալիս Բերայի Վերդիի թատրոնում։

Լեոնը մի կարճահասակ նիհար երիտասարդ էր, դժգոյն դէմքով. գեղարուեստական համալսարանի ուսանող էր. այդ տարի նա աւարտում էր ճարտարապետական ֆակուլտէտը, որից յետոյ նա մտադիր էր ճարտարապետ դառնալ ուղղակի։

Վիրժինը, նրա քոյրը—ինչպէս ասում ձեզ—տասնեչորս տարեկան էր. գեղեցիկ դէմքով, դժգոյն թշերով, մեծ սև աչքերով և դէմքի միւս մասերի կանոնաւորութեամբ։ Վիրժինը միշտ լաւ էր հագնւում, միշտ ամենալաւ կտորներից էր ընտրում իւր շրջազգեստի համար. քան-

դակապատ կոթով հովանոցը ձեռքին, ձեռնոցները մինչև արմունկը քաշած, կոշիկները փայլուն կաշիից և սրճագոյն ժապաւինով կապած։ Ի լրումն ամենայնի՝ նորա թևերի վրայ սփռուում էր երկար սև մազերի մի մետաքսանման հիւս, որը մէջտեղից թուլութեամբ կապուած էր վարդագոյն ժապաւինով։

Վագոնի մէջ ազատ տեղ շատ կար։ Այնտեղ միայն հինգ մարդ էին նստել. նրանցից մէկը մի «պոտոող դէրվիշ» էր, իւր բաց-սրճագոյն երկար վերարկուով և բաժակաձև թաղեայ երկար գլխարկով. նա գլուխը վագոնի լուսամուտից դուրս հանած՝ մինարէթների ծայրերին էր նայում։ Երկուսը թիւրք արհեստաւորներ էին, որոնք Եդիկուլէի գազի գործարանից վերադառնում էին տուն իրանց կեղտոտ դէմքով ու հագուստներով։ Միւս երկուսը, ըստ երևոյթին, հայեր էին. մէկը հասարակ հագուստով և ճմրտկած կեղտոտ ֆէսով, իսկ միւսը փայլում էր իւր շքեղ հագուստների մէջ։ Սիրուն ձեռնոցներ, ձեռքին սև փայլուն գաւազան, ճերմակ փողպատ, եւրոպական փափուկ և ամենանոր լայնաշուրթն գլխարկ. ահա ինչ աչքի էին ընկնում առաջին տեսքից։ Երիտասարդը սիրուն էր, կարծես օրիորդ լինէր, ընչացք չունէր, իսկ մօրուքը նոր գերծել էր և ծնոտը սպիտակեցրել պուդրով. իրաւ է, պէնսընէ էլ ունէր, սակայն խաղում էր նորա հետ և միայն այն ժամանակ ցցեց քթի վրայ, երբ Վիրժինը ներս մտաւ։

—Օհո՛, գոչեց Լևոնը, երբ տեսաւ այդ ֆրանտին—բարև, մսիու Վահրա՛մ, ասանկ ո՞ւր կերթանք կոր։

Եւ հեգնօրէն ժպտելով նստեց նորա կողքին։

—Փերա, պատասխանեց Վահրամը կիսովին Վիրժինին նայելով ը՛ը՛մ... բայց, ներեցէ՛ք, փարդօ՛ն, դուք զիս փրէզանթէ [1]) չըրիք ձեր...

—Ֆոյրս, յարեց Լևոնը և դաւնալով քրոջը ասաց—մսիու Վահրամ Ֆաչբերունեան։

—Ֆաչբերունի, ուղղեց Վահրամը—իսկ դուք ո՞ւր կերթաք ձեր մա... մա... փարդօ՛ն, ձեր քո՞յրը։

—Ամուսնացած չէ, ժպտեց Լևոնը։

---

[1]) Ներկայացնել։

—Ուրեմն, ո՞ւր կերթաք կոր ձեր մադմազել քրոջը հետ այս պահուս։

—Փերա, Վերդիի թատրոնը։

—Ա՛ ա՛, իրա՞ւ, հոն Կարմե՛ն կամ Լա բէլ-էլէ՞ն և կամ Լէ քլոշ դէ քօրնը՞վիլ...

—Ո՛չ, միջադատեց Լեոնը—հայերէն են ներկայացնելու։

—Հը՛մ, դէմքը ծռմռեց Վահրամը—հայերէ՞ն... գիտէ՞ք մսիւ Լեոն, քաղցր չէ՞ք դանար ֆրանսիերէն լեզուով փիէսները և քոմէդիները, ա՛հ, նա մանաւանդ սա օփերաները, որք կըզմայլեցունեն իրանց լեզուով ու մուզիքոշնէին։

—Ճաշակիդ է կախուած, դիտեց Լեոնը. ես աւելի կը սիրեմ հայերէն լեզուով լսել, որովհետև չեմ հասկնար ֆրանսերէն լեզուն։

—Հա՛, հա՛, հա՛... քրքջաց մսիւ Վահրամը – տեսա՞ր մի, իսկ մադմազե՛լը, դարձաւ նա Վիրժինին—իսկ դո՞ւք, մադմազէլ, կը սիրէ՞ք ֆրանսերէնը, անշուշտ գիտէք ալ։

—Գիտեմ, պատասխանեց Վիրժինը։

—Եւ ո՞վ է այն, զոչեց խրոխտ ձայնով Վահրամը—ո՞վ է այն, որ դիտնալով ֆրանսերէնը, չը սիրէ. ես կը կարծեմ, մադմազէլ, որ դուք ալ ինձ նման մեծ հաճոյքով կը լսէք կոր ֆրանսերէն լեզուով փիէսները։

—Կը սիրեմ լսել, պատասխանեց Վիրժինը։

—Ա՛հ, տեսա՞ք, մսիւ Լեոն, բացականչեց Վահրամը ուրախութեամբ—ձեր քոյրը համամիտ է ինձի հետ։

Եւ նա Վիրժին նայեց մի այնպիսի ժպիտով, որ խեղճ աղջիկը կարմրեց և ակնարկը դարձրեց մի ուրիշ կողմ։

Զիաքարշը այդ միջոցին հասել էր Գիւլհանէի առջև. տաճիկ արհեստաւորները արդէն իջել էին, դերվիշը գլուխը լուսամուտից չէր հեռացնում, իսկ միւս հայը նստած տեղում քնել էր։

—Ամեն մարդ իւր ճաշակը ունի, դիտեց Լեոնը—քոյրս սիրում է ֆրանսերէնը, իսկ ես ոչ։

—Օ՛, yes [1])... մռմռաց Վահրամը և յանկարծ դառնալով Վիրժինին, հարցրեց ֆրանսերէն։

---

[1]) Այո, այո։

—Mademoiselle prefére la langue française, n'est-ce pas? j'en suis enchantè... (*օրիորդը նախադասում է ֆրանսերէնը, այնպէս չէ՞, հիացած եմ*)։

—Merci, *համարեա ակամայ պատասխանեց օրիորդը։*

—Եւ ձեր պարոն եղբա՞յրը, շարունակեց Վահրամը նոյն լեզուով-գիտէ՞ ֆրանսերէն, գոնէ մի քանի բառեր հասկանո՞ւմ է։

—Ո՛չ, *այս անգամ աւելի վստահութեամբ պատասխանեց Վերժինը—եղբայրս հազիւ տովորական փարդօն, մերսի և բօնժուր բառերը գիտէ...*

—Ծօ *կեցցէ՛ք, գոչեց Լեոնը ծիծաղելով—այդ ինչ լաւ կոտրտում էք ֆրանսերէն։*

—Փարդօ՛ն, *մսիու Լեո՛ն, միթէ դուք այդչափ լա՞ւ կը հասկնաք, որ քրիտիք* [1]) *ալ կընէք։*

—Ո՛չ, *բայց տեսնում եմ որ կմկմալով չես խօսում։*

Վահրամը *ժպտելով Վիրժինին նայեց։*

—Եղբայրս *միայն հայերէն և տաճկերէն գիտէ, արդարացրեց Վիրժինը։*

—Օ՛, oui, oui, ça ne fait rien [2])... *գիտէ՞ք, ես ամբողջ երեք տարի Փարիզում եմ եղել, իսկ այդ հայերէն ներկայացումները. իմ ականջս ծակում է այդ լեզուի բառերը.*

—Հայերէնը *մեր մայրենի լեզուն է, դիտեց Վիրժինը։*

—Ա՛հ, *այո,* sans doute... [3]) *այդ շատ ճիշտ է, ամէն մարդ պիտի սիրէ իւր լեզուն, իւր հայրենիքը, ֆրանսացիները որչա՛փ հայրենասէր են, տեսնէք նոցա, երբ գոչում են,* o'h, ma chère patrie... [4]) *նոցա բոլոր հեղինակները, գիտունները, Վիկտոր Իւգօն, Դիւման, անմահն Դէօթէն, Շիլլերը... դուք կարդացել էք այդ գրուածքները. ես միշտ կարդում եմ.* quelle esprit [5]), *սքանչելի՛ են, ի՞նչ վսեմ գաղափարներ... բայց ներեցէ՛ք, դուք այժմ Վերդիի թատրո՞ն էք գնում ուղիղ։*

—Այո՛, *պատասխանեց Վիրժինը, որը կարծես սկսում էր հետաքրքրուել այդ երիտասարդով։*

---

[1]) *կրիտիկա։* [2]) *Այո, այո, ինչպես չունի։* [3]) *Անկասկած։* [4]) *օ, իմ սիրելի հայրենիք։* [5]) *Ինչ ոգի, ինչ...*

—Tres bien, tres bien [1]), ուրեմն անշուշտ թոյլ կը տաք որ ես ևս ընկերանամ ձեզ։

—Շնորհակալ եմ, բայց դուք գործից ետ չը մնաք,

—Գո՞րծ. հա՛, հա՛, հա՛... ես ազատ եմ, օրեկան միայն երկու ժամ գործ ունիմ la sublime-porte-ի [2]) մէջ, այն էլ ի՞նչ գործ. քանի մը գրուածքներ եմ թարգմանում և վե՛րջ. e finito il comedia... ամիսը լրանալուն պէս 10 ոսկին տալիս են ձեռքս ma chére mademoiselle, ես ձեզ հետ կը գամ, կը հաճի՞ք։

—Ինչո՞ւ չէ, շնորհակալ կը լինենք, ժպտեց Վիրժինը։

Զիաքարշը վերջապէս կանգ առաւ, Լևոնը, որը սկսել էր քնել, վեր թռաւ և Վիրժինի ու Վահրամի հետ ցած իջան վագոնից։

Տանելհինգ րոպէից յետոյ երեքն էլ ցած էին իջնում Վահրամի վարձած կառքից և մտնում էին Վերդիի թատրոնը։

Լևոնը յառաջացաւ դէպի տոմսակավաճառը.

—Բազկաթոռի տոմս, ասաց նա։

Allons donc... [3]) մեր՛ս Լևոն, ցատկեց դէպի նա Վահրամը—այդ ի՞նչ է, հայաէ՛ բաքալը՛մ [4]), ետ քաշուէ սկէց։

Ապա դառնալով դէպի տոմսավաճառը, ձգեց նրան մի ոսկի և գոչեց։

—Un billet de loge [5])։

Բ

ՏԻՐՈՋ ՍՐՃԱՐԱՆԸ

Կում-Կափուի երկաթուղուց կայարանի մօտ կան երեք-չորս հատ սրճաններ, որոնց մէջ իւր շքեղութեամբ նշանաւորն է մի երկյարկ սպիտակ քարից շինած շէնք։

Մեծ ապակիներով լուսամուտից ներս, առաջին յարկում, կարելի է տեսնել մարմարեայ սեղաններ դարսած պատերի տակ, երկար նստարաններով և շքեղ աթոռներով շրջապատ-

---

[1]) Շատ լաւ. [2]) կոմնդիան վերջացաւ, իտալական մի ոճ է, որը համապատասխան է մեր «պրծաւ գնաց» ոճին։ [3]) ոճ է, որ նշանակում է, «այդ ինչ է» համապատասխան է ռուսաց «ну»բառին։ [4]) «Հպդէ նայենք» տաճկական ոճ է որ նշանակում է «ну». [5]) լոժայի մի բիլէտ աւէք։

ւած։ Իւրաքանչիւր սեղանի վերայ գրուած կայ մի մի յաղճապակեայ լուցկիաման և նոցա կողքին հայերէն, տաճկերէն և անդղերէն լրագիրներ։ Դա մի բողոքականի սրճատուն էր. պատերի վրայ կախուած են զանազան մեծութեամբ շրջանակներ, որոնց մէջ ոչ թէ պատկերներ են գրուած, այլ շքեղ տառերով գրուած կան ս. Գրքից քաղուած խօսքեր. օրինակ «Տէրը իմ հովիւն է, Յիսուսի եկ» կամ «Ետուէք եկուր» և այլն։

Սրահի յատակը սալած է և մաքուր լուացած։

Խիզանի Ուսումնասիրաց ընկերութեան հայերէն ներկայացումի երկրորդ օրը, այդտեղ, մի սեղանի շուրջը շրջան կազմել նստել էին Հուքուքի, Թրիյէի, Համիդիէյի և Սուլթանիէյի հայ ուսանողներ [1]։ Ուսանողները լսում էին մէկին, որը կարդում էր և միւսին, որը դիտողութիւններ էր անում կարդացածի վրայ։

Սամաթեայ գնացող երկաթուղին նոր սուլելով անցել էր կայարանի առջևից, երբ տիրոջ այդ սրճարանը մտաւ մի երիտասարդ. նա կրում էր բժշկական դպրոցի նշանագգեստը—մի երկար պղնձեայ կոճակներով վերարկու, գլխին աշտարակաձև կարմիր ֆէս՝ կախ ընկած փիւսկիւլով և ոտքին երկար փայլուն կոշիկ։

Ներս մտաւ ծխած դէմքին, չորս կողմը մի ակնարկ ձգեց, յետոյ մօտեցաւ ուսանողներին և բարևեց.

—Օ՛, բա՛րև, բա՛րև, Կարապետ էֆէ՛նդի, ասացին ամէն կողմից և աթոռները շարժեցին։

Կարապետ էֆէնդին առաւ մի աթոռ և նստեց։

—Ի՞նչ էք անում այստեղ, հարցրեց նա դառնալով մի նիհար ուսանողի։

—Վիճում են, մէջ մտաւ լիքը և կլոր դէմքով Հիւքուքի մի

---

[1]) Կ. Պոլսում կան տաճկական բարձրագոյն կուրսեր, որոնք են, իրաւաբանական (4 տարի), բժշկական (2 հատ, զինուորականը 10 տարի, քաղաքականը 8 տարի), Համիդիէ և Սուլթանիէ գիմնազիական ընթացքներ։ Բացի դոցանից կան նաև գեղարուեստական (3 ճիւղ—ճարտարապետական, արձանագործութեան և նկարչութիւն) վաճառականական և լեզուաբանական կուրսեր։ Այս բոլոր կուրսերում դասախօսում են տաճկերէն լեզուով և տաճկերէն դասագրքերով. պրոֆէսորներից մեծ մասը Եւրոպայում աւարտած տաճիկներ են։

ուսանող, որը ֆէսը ուղիղ ծոծրակի վրայ դրած՝ զլուխն էր քորում։

—Հա՞, ծիծաղեց Կարապետը—էլի՞ վիճում էք, սեսնե՛նք, այսօր ի՞նչ բանի վրայ էք վիճում։

—Ա՛յ ասեմ, գոչեց նիհարը, որը Ռաֆայէլ էր կոչում—այս թուղթիս «Արևելքի» մէջ տպուած Ամերիկայի մի նամակն էինք կարդում և...

—Ասոծու սիրուն, ասաց Սուլթանիէյի մի աշակերտ, որը արձանի պէս ուղիղ և անշարժ նստած՝ խօսելու ժամանակ աշխատում էր չը շարժուել – Ասոծո՛ւ սիրուն, Ռաֆայէլ էֆէնդի, թէյդ կը սառչի, «սիրոջ թէյը», որին 20 փարայ ես տուել։

Հայ բողոքականը յօնքը պռնտեց, սակայն լուեց և խուցը մտաւ։ Ռաֆայէլը ձեռքը պարզեց թէյի գաւաթը վերցնելու։

—Սպասի՛ր, բռնեց նրա թևից Լևոնը—թղթի կտոր չե՞ս ուզում, որ նրանովը գաւաթը բռնես։

Պէտք է յայտնեմ ընթերցողիս, որ շատախօսութեան ներկայացուցիչ Ռաֆայէլ էֆէնդին այնպիսի չափազանցութեան էր հասցրել իւր մաքրասիրութիւնը, որ ամբողջ օրը իրան մաքրելով էր զբաղուած և ձեռք չէր վեր առնում բոյսի շիւղերից պատրաստած խոզանակից, որ միշտ ման էր ածում հեսը, նա այդ չափազանցութեան համար ծաղրի էր ենթարկւում իւր ծանօթներից, բայց չէր վհատւում, միայն բարկանում էր։

Հենց դորա համար էր, որ երբ Լևոնը «թուղթ չես ուզում որ գաւաթը բռնես» ասաց, Ռաֆայէլ էֆէնդին կարմրեց, կատաղաբար թողեց թէյի գաւաթը, վեր թռաւ տեղից և դառնալով ժպտող Լևոնին՝ գոռաց.

—Սկզբէ՛ս, չիրո՛զ [1]), կուզէիր որ քեզ նման աղտո՞տ ըլլամ։ այդ ի՞նչ է շատրիկդ, ֆո՛ւհ... կոշիկնե՞րդ, կարծես տասը տարի ներկ չէ տեսեր, ֆէ՞սդ, կարծես հինգ հարիւր տարի կաղապարի վրայ չէ անցեր, հապա սա երե՞սդ... քանի՞ հազար տարի է, որ չես լուացեր։

Բոլորը նայում էին զայրացած Ռաֆայէլ էֆէնդուն և ժպտում էին։

—Դո՞ւ քանի միլիոն տարի է, որ չես խօսել և այժմ բոլորի ոտն էլ հանում ես, ասաց արհամարհութեամբ Լևոնը։

---

[1]) Ապուխտ արած ձուկ։

—Լռի՛ր, գարշելիդ զբե՛զ, որոտաց Ռաֆայէլը փրփրալով—ես շա՞տ կը խօսեմ... ես կը տրամաբանեմ, իսկ դո՞ւն, դո՞ւն ինչ կընես, զէվզէ՛կ, քիչէն պիտի տեսնես թէ ինչե՛ր կընէ Ռաֆայէլ էֆէնդին, տօքտէօր իրաւաբանութեան, պատուոյ վկայականով. դո՞ւն, զէվզէ՛կ, դուն դեռ շատ պիտի ծիծ ուտես, որ կարենաս գոնէ ճարտարապետի-որմնադրի, մշակի, համալի վկայական առնուլ։

—Լա՛ւ, լա՛ւ, մէջ մտաւ բժշկական ուսանող Կարապետը—ի՞նչ ես գլուխներս ցաւցնում, մենք ամենքս էլ գիտենք դու ով ես։

—Կը լռե՞ս դուն ալ, մարդ սպանո՛ղ, դարձաւ նրան Ռաֆայէլը։

—Ծօ՛, ծօ՛, ծիծաղեց Կարապետը—լեզուդ քեզ քաշէ, եթէ ես մարդու մարմինը կը սպաննեմ, դուն ալ լսելիքը։

Այդ միջոցին երկարահասակ հայ բողոքական սրճագործը մօտեցաւ նրանց, գլուխը ծռեց և մի շողոքորթ ժպիտով ասաց։

—Եղբայրնե՛ր, քիչ մը կամաց խօսեցէք։

—Հայդէ՛, ծօ՛, գոռաց նրա վրայ Ռաֆայէլը—հոս ո՞վ է քու եղբայրդ, տխմա՛ր, դուն ո՞վ ես, որ ես քու եղբայրն ըլլամ։

Բողոքականը վախեցած ետ քաշուեց և կմկմաց։

—Էֆէնդի...

—Հա՛, ըշտէ ատա՛նկ, «էֆէնդի» ըսէ, եղբա՛յր, յարեց նա ծաղրելով—փո՞ւհ, ե՞ս քու եղբայրդ. հա՛յդէ, կորսուէ սկէց, մէյմ՚ալ չը համարձակուիս եղբայր ըսել։

—Էհէ՛, լսեց յանկարծ նրա ետևից—այդ ի՞նչ է, Ռաֆայէլ էֆէնդիս նորէ՞ն բարկացել է։

Ռաֆայէլը ետ դարձաւ. նրա ետևում կանգնել էր գրաւիչ դէմքով, քթին սէնսլնէ, գլխին լայնաշուրթն մի գլխարկ, ծածանող ծայրերով մետաքսեայ վզկապով միջահասակ և նիհար մի երիտասարդ։

—Արշա՛կ... գոչեց Ռաֆայէլը ձայնը մեղմացնելով։

—Ի՞նչ է եղել, ասաց Արշակը նստելով—նորէն սկսել էիր մեծանալ, «եղբայր» բառը վշտացնո՞ւմ է քեզ։

Յետոյ ծիծաղեց, գրպանից մի բուռ մանր կտրտած թղթեր հանեց և նոցանից մէկը Ռաֆայէլին տալով աւելացրեց։

—Ահա՛, առ, այս երեկոյ պիտի դաս այդ արհամարհածդ «եղբայրներիդ» երեկոյթին։

—Տոմսա՞կ ունիս, գոչեցին բոլորը մօտենալով նրան։

—Այո՛, ժպտեց Արշակը—Մադամ Շնայդրը ինձ խնդրեց, որ ձեզ բաժանեմ այս ձրի տոմսակները. ո՞վ կուզէ։

—Ես, ե՛ս, ես, ասացին ամենքը։

Եւ շուտով Արշակի ձեռքին միայն մի հատ տոմսակ մնաց։

—Այս էլ ինձ. ասաց նա տոմսակը գրպանը դնելով։

Գ.

ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

1885 թուին, Կ. Պոլսում զարգացման մի շարժում էր սկսել. բժշկական, իրաւաբանական, գեղարուեստական և միւս բարձրագոյն դպրոցների հայ աշակերտները (եթէ կարելի է ասել «ուսանողներ») ժողովուել մի ընկերութիւն էին կազմել և երկար մտածելուց յետոյ, հինգ նիստ կայացնելուց յետոյ, վճռել էին ընկերութեան անուն դնել «գիտական ակումբ»—միայն այդ էին վճռել դեռ. և ս։

Ակումբի նպատակը դեռ յայտնի չէր. մէկը ասում էր, որ պէտք է մի լրագիր հրատարակել առանց բանակռիւների և իրարու հայ-հոյելու յօդուածներով, միւսը՝ յառաջադիմութիւն տարածել հասարակութեան մէջ, երրորդը՝ լսարաններ հաստատել, ուր խօսեն գիտութեան վրայ, չորրորդը՝ պատգամաւորներ ունենալով հասարակական զանազան հաստատութիւնների մէջ, ակումբի քննադատութեանը ենթարկել նոցա ընթացքը։

Ակումբի անունը որոշելուց յետոյ, անդամները մի նիստ էլ նստեցին որոշելու թէ ո՞ւր պիտի լինին նիստերը. երկար վիճաբանութիւններից յետոյ վճռեցին փոփոխակի ժողովել Ենի-Կափուի վարժարանի սրահը և առաւելապէս Տիրոջ սրճարանի վերին յարկում, որը բողոքականաց ժողովարանն էր և ուր արդէն պատրաստ կային ամբիոն և նստարաններ. մադամ Շնայդրից հրաման խնդրեցին և նա թոյլ տուեց։

Հէնց այդ էր պատճառը, որ հետզհետէ տիրոջ սրճատուն էին մտնում ուսանողները. ժամը 10-ին (ըստ տաճկական) ժողովը պիտի բացուէր. անդամները մի ժամ առաջ էին եկել, ուստի և թէյ էին խմում և զարմանում։

Արշակը Գիտական ակումբի առաջնորդն էր։ Երբ բոլոր տոմսակները ցրուել էր, նա աթոռը քաշեց Ռաֆայէլի մօտ և նստեց.

—Ի՞նչ նոր բան կայ, հարցրին մի քանիսները։

—Շատ բան չը կայ. բայց եթէ կուզէք, ահա ձեզ մի փոքրիկ նորութիւն։ Մի շաբաթ է, որ գաւառից մի հայ երիտասարդ է Կ. Պոլիս եկել. փոքր ինչ յետոյ նա կը մտնի այստեղ, ես եկել եմ նրան սպասելու, որպէս զի ձեզ հետ ծանօթացնեմ։

—Ինչացո՞ւ է, հարցրին ամէն կողմից։

—Ուսուցիչ է. զանազան հանգամանքներից ստիպուած թողել է գաւառը և եկել է Կ. Պոլիս. պարապ է, թէ ի՞նչ գործի կը ձեռնարկի՝ դեռ յայտնի չէ։

—Զարգացա՞ծ տղայ է։

—Կարծում եմ, ասաց Արշակը—նախ և առաջ շատ լաւ ուսումնասիրել է հայ ժողովուրդը, որի մասին նա շատ ընդարձակ տեղեկութիւններ է տալիս. կարդացել է շատ և այժմ էլ կարդում է. միջնակարգ ուսում է ստացել, սակայն ինքնաշխատութեամբ գիտէ այն բոլորը, ինչ որ մեզնից շատերը դեռ ևս նոր պիտի սովորեն... պարոննե՛ր, այդ երիտասարդը համակրելի տղայ է, շուրջ 26 տարեկան, նիհար, հիւանդոտ, հազում է խեղճը. չի սիրում երկար խօսել, կրքոտ էլ չէ, պատասխաններն իսկ չի ծամծմում։

—Շատ չե՞ս գովում, միջահատեց Ռաֆայէլը։

—Դուք այդ կը տեսնէք և եթէ ես վճռեցի սկզբից խօսել ձեզ նրա մասին, այդ նրա համար էր, որ այդ երիտասարդը Կ. Պոլսոյ մէջ նմանը չէ տեսնուած մի տեսակ լրջութիւն ունի, որը գուցէ ձեզ ծիծաղ պատճառէ, ես էլ սկզբում ծիծաղում էի...

—Միթէ նրա հետ շա՞տ ժամանակ է, որ ծանօթ ես, հարցրեց Կարապետը։

—Այո՛, առաջին օրը մի հայ լրագրի խմբագրատան մէջ տեսայ նրան. խմբագրութեան անդամները վատ կարծիք կազմեցին նրա մասին, ասում են՝ լուռ է, որովհետև խօսել չը գիտէ։

—Տրամաբանական է, դիտեց Ռաֆայէլը։

—Կ. Պոլսոյ տրամաբանութիւնը այդպէս է, ծիծաղեց Արշակը բայց մենք մեզաւոր դատատացիներս, ուրիշ տրամաբանական օրէնք-

ներ ունինք, մենք մտածում ենք. լաւ է, որովհետև պիտի լսել աւելի, քան խօսել. չի խօսում, որովհետև ամենքի հետ շատախօսել չէ կարելի և չի շատախօսում, որովհետև շատախօսութիւնը զզւելի ախտ է։

—Ականջը կանչի՛ Ռաֆայէլ էֆէնդիի, գոչեց Լևոնը հեռուից—նա առանց մտածելու, իսկոյն կը սկսէր Օրինաց գրքի 15-րդ հատորի 19-րդ բաժանման 60-րդ մասի, 125-րդ գլխի 2645-րդ յօդուածի 6000-րդ համարի արամադրութեան դէմ գործելով ենթարկուել 24-րդ հատորի...

—Ցիմա՛ր, որոտաց Ռաֆայէլը—ի՛նչպէս կը համարձակուիս օրինաց գրքերու անունը տալ, երբ նոցա երեսն անգամ չես տեսեր, մինչդեռ ես, ես տարիներ եմ կորցրեր ատոնց վրայ.

—Որոնց կողերին թղթով ես ձեռք տալիս. ծիծաղեց Լևոնը։

—Դո՛ւ, ապո՛ւշ, դու ոչինչ չես հասկնար առողջապահութենէն, մինչդեռ ես...

Այդ միջոցին սրճատուն էր մտնում մի եւրոպական զլխարկով միջահասակ երիտասարդ։ Հագել էր մաքուր, ձեռքին բռնած ունէր մի գաւազան, իսկ միւս ձեռքումը մեսաքսեայ ձեռնոցները կլորեցրած դնդակի պէս։

Նա տգեղ չէր. ունէր փոքրիկ ցանցառ մօրուք, ընչացքի երկու ծայրերը մկան պոչի պէս դէպի վեր սրած։

Մօտեցաւ, լռութեամբ բարևեց բոլորին, յետոյ մի աթոռ դրեց մի կողմ ու սկսեց ձեռնոցների հետ խաղալ։

—Բարի եկար, ասաց նրան Արշակը։

—Ի՞նչպէս էք, Միսաք էֆէնդի, հարցրեց Ռաֆայէլը։

—Ը՛ը՛ըմ... [1]) լաւ եմ... կմկմալով և շարունակ բեխերի ծայրերը ոլորելով ասաց Միսաքը—քիչ յոգներ եմ... մեծ յօդուած մը դրեցի... սանկ... հինգ վեց երեսներէ բաղկացեալ։

—Լաւ մեծ գործ էք կատարել, դիտեց Կարապետը—ի՞նչ նիւթի վրայ է։

—Ը՛ը՛մ... սանկ... ժողովրդեան զարգացման վրայ... սանկ... ը՛ը՛մ... այսինքն ինչ դեր կը խաղայ զարգացումը. փաղը կը տպի։

—Վաղուայ համարի՞ մէջ։

---

[1]) Ասանք (այնպէս) բան է։

—Այո՛, այո՛, հրամայեցի որ անպատճառ շարեն. մի ժամէն, և նա փոքրիկ ժամացոյցին նայեց—ժամէ մը պիտի երթամ փորձը տեսնելու։

Միսաք էֆէնդին հայ լրագիրներից մէկի աշխատակիցներից էր։

—Իսկ դո՞ւք, դարձաւ նա ամենքին—ի՞նչու էք հաւաքւեր։

—Մոռցա՞ր ժողովը. գոչեց Արշակը։

—Ը՛ը՛մ... այո՛, ես խօսեր եմ ժողովների մասին... էֆէնդինե՛ր, ներեցէ՛ք, ես պիտի երթամ։

Եւ նա ոտքի ելաւ։

—Ո՞ւր, ասաց Կարապետը—քիչ յետոյ նիստը պիտի բացւի։

—Ինձի ներեցէք, հո՞ն... ը՛ը՛մ. փոքրիկ ժողով մ՚ալ ես ունիմ, օրիորդները ինձի կը սպասեն կոր։

—Օրիորդնե՞ր, գոչեց Ռաֆայէլը—անիրաւութի՛ւն, կը բողոքեմ, ես ինչո՞ւ հոն չը կամ։

Միսաքը արագութեամբ դէպի դուռը գնաց։

—Ժողովի չը պիտի՞ գաս, հարցրեց նրա ետևից Արշակը։

—Սանկ... քիչ յետոյ կը գամ. կմկմաց Միսաքը և դէպի դուռը շտապեց։

Բայց այնտեղից յանկարծ մի հասակաւոր մարդ ներս մտաւ, Միսաքի դէմը փակեց և գոչեց զարթ ձայնով։

—Օ՛, օ՛, «սանկ» էֆէ՛նդի, ո՞ւր կը շտապես։

—Օ՛հ, Յակովբ էֆէնդի, կարմրելով կակազեց Միսաքը ներս մտնողին տեսնելով—քիչ յետոյ կուգամ, անպատճառ կուգամ։

Եւ դուրս թռաւ դռնից ու անհետացաւ։

Նոր ներս մտնողը նրա ետևից նայեց, մի զարթ ծիծաղ արձակեց և ասաց.

—Օ՛, որ շինեսդ, քակեսդ, կազմեսդ և լուծեսդ, գրեսդ և ջնջեսդ, ողորմեա մեզ։

Յետոյ արագութեամբ մօտեցաւ երիտասարդաց խմբին և բարևեց. բոլորը լռութեամբ և մեծ յարգանքով ոտքի ելան և տեղ ցոյց տուին նոր հիւրին։

Յակովբ էֆէնդին քառասնամեայ, խորշոմալից ճակատով, ալեխառն մազերով և բաւական դեր մի անձ էր. նրա դէմքի վրայ փայլում էին դիտող հայեացք և այնպիսի փոփոխուող ժպիտներ, որ

տեսնողը իսկոյն հասկանում էր թէ Ցակովբ էֆէնդին այս ինչ ժպտի ժամանակ ինչ էր մտածում... իսկ երբ նա ալ և ս չէր ժպտում, ստանում էր մի մելամաղձոտ լուրջ կերպարանք՝ կրակոտ թափանցող աչքերով. այդպէս դէպքում նա պատկառանք էր ազդում։

Նա նստեց, ուշադրութեամբ բոլորին դիտեց առանց ժպտելու, յետոյ ոտները մի աթոռին դէմ տուեց և հարցրեց.

—Ի՞նչ կընէք հոս։

—Մենք, խօսեց Կարապետը—հաւաքւել ենք, ը...

—Խօսենք. վերջացրեց Արշակը։

—Խօսէ՞ք, ժպտեց հեգնօրէն Ցակովբը—գուրսը կամ ձեզ ու ձեզ քի՞չ կը խոսիք, որ կը հաւաքւիք ալ։

Եւ յանկարծ խուցի դրան մօտ կանգնած հայ բողոքականին դառնալով՝

—Ծօ՛, գոչեց—սուրճ մը տուր ինձի, բայց նայէ, որ Դաւիթ մարգարէ չը խառնես հետը—այդ մարգարէն անմարսելի է։

Բոլորը ծիծաղեցին, սրճագործը դէմքը ծռմռեց և ներս մտաւ.

—Է՛, դարձաւ նա երիտասարդներին—ժողովւեր էք խօսելու հա՛, չեմ զարմանար ա՛, պոլսեցւոց լեզուի զսպանակը քիչ մը թոյլ է, խեղճ ռուսահայերը...

—Ռուսահայերը իրենք էլ պակաս շատախօսներ չեն. դիտեց Ռաֆայէլը։

—Այո, բայց նոքա շատախօսութիւնից զզւել էլ գիտեն. իսկ պոլսահայերը կարծես ոգևորւում են շատախօսութիւնից և նորան յարգում են ու սիրում։

Դ.

ԳԻՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Երիտասարդները բարձրացան սրճատան վերի յարկը դրական ակումբի նիստ կազմելու։ Արահը ուր պէտք է լինէր նիստը, կահաւորւած էր 10 կարգ երկար նստարաններով. վերի գլխում դրւած կար մի ամբիոն, որոյ գլխին, պատի վերայ երևում էր շրջանակի մէջ «Ցիսուսի եկ» բառերը։

Ուսանողները տեղ գրաւեցին նստարանների վերայ. Արշակը

նստաւ ամբիոնի առջև, գրպանից հանեց մի փոքրիկ զանգակ, թուղթ, մատիտ և թղթի վրայ «Ե-րդ ժողով գիտական ակումբի» գրելուց յետոյ, դարձաւ բոլորին և այսպէս խօսեց։

—Ժողովը բացուած է, անդամների մեծամասնութիւն այստեղ է, պակաս են միայն Վահրամ էֆէնդի Քաջբերունին, Միսաք էֆէնդի Դնունին, Սիսակ Կայթանճեան և Յակոբ Սահառունի էֆէնդիները... ուրեմն կարող ենք սկսել։ Սկսելուց առաջ կարևոր եմ համարում օրակարգի մասին մի քանի խօսք ասել։ Երբ մենք ժողովեցանք այս ակումբը կազմելու, նպատակ ունէինք մի մարմին կազմել, որը զբաղուի գիտութեամբ և հենց դրա համար էլ անունը դրինք «գիտական ակումբ», բայց...

—Խօսք կ'ուզեմ, նախագահ էֆէնդի, յանկարծ նստած տեղից վեր ցատկելով գոչեց Ռաֆայէլը և ցուցամատը պարզեց։

—Երբ ես լմնցնեմ։ ասաց Արշակը և երբ Ռաֆայէլը կոարուածի պէս նստեց՝ շարունակեց։

—Բայց այժմ մեզնից իւրաքանչիւրը ժողովիս նպատակը այնչափ ընդլայնեց և մասերի կտրտեց, որ այլ ևս յայտնի չէ թէ մենք ի՞նչ ենք անում, ժողովում ենք ջո՞ւր ծեծելու, պարոննե՛ր, այսօր պէտք է վերջնական վճիռ կայացնել։

—Խօսք կ'ուզեմ, գոչեց նորէն Ռաֆայէլը։

—Այժմ ես վերջացրի, ասաց Արշակը—խօսքը Ռաֆայէլ էֆէնդիինն է. Ռաֆայէլ էֆէնդին վեր կացաւ, հազաց, իւր կողքիններին նայեց և երբ ակնարկը հանդիպեց Լևոնի հեգնական դէմքին, պարտք համարեց գլխովը մի սպառնական շարժում անել, յետոյ դարձաւ նախագահին և ձեռքերով շարունակ օդը պատառելով՝ բացականչեց։

—Երևելի փիլիսոփայ և բանաստեղծ Հորասը, այսպէս սկսեց Ռաֆայէլ էֆէնդին, իւր «L'art poétique»-ի մէջ ասում է «quid deceat, quid non» այսինքն «Corrigez ce que est mauvais, gardez ce que est bon» այսինքն «ինչ որ յարմար է պահէք, թողէք ինչ որ անյարմարն է»... պատկառելի ժողովդ գիտէ այդ և դրա նշանակութիւնը, բոլորս էլ բարձրագոյն համալսարանի ուսանողներ ենք և կարող ենք հասկանալ թէ ինչը յարմար է, ինչը ո՛չ. ուստի, առաջարկում եմ իշխոյն յատաջ բերել զանազան, այլ

և այլ, տարբեր նպատակներ և նոցա միջից ընտրել այն, «quid deceat, quid non»։

—Plaudite, cives! [1])... գոչեց այն կողմից Լևոնը, որ միշտ սիրում էր ծաղրել շատախոսին. բոլորը ծիծաղեցին։

—Ապո՛ւշ, որոտաց Ռաֆայելը—ամբողջ համալսարանը գիտէ, որ Ռաֆայել էֆիէնդին առաջինն է խոսելու, տրամաբանելու մէջ, իսկ քեզ նման որմնադիրները իրանց խոսքերը միայն բառարաններու մէջէն կրնան դտնել. ժողովիս համար մեծ պակասութիւն մ'է...

—Ի կա՛րգ, գոչեց նախագահը զանգահարելով—մասնաւոր խոսակցութիւնը արգիլեալ է, խոսքը նախագահին պիտի ուղղել։

—Խոսք կուզեմ, ասաց բժշկական դպրոցի մի ուսանող։

—Խոսքը Յարութիւն էֆիէնդիինն է։

—Նախագահ էֆիէնդի, այստեղ եկել ենք իրարու նախատելո՞ւ թէ գործ տեսնելու, բողոքում եմ և խնդրում որ բողոքս արձանագրուի։

—Այո՛, գոչեց այն կողմից մի ուրիշ ուսանող—բողոքում եմ և ես և աւելացնում եմ, որ Ռաֆայել էֆիէնդին անվայել է պահում իրան. դիտողութիւնս արձանագրուի։

—Նա ես խնդրում էի որ տուդանքի ենթարկուի. առաջարկութիւնս արձանագրեցէք։

—Դուք բոլորդ ալ ինձ կը նախատէք, ասաց Ռաֆայելը—ուստի բողոքում եմ որ բողոքս արձանագրուի։

Այդ շատ կը տևէր, եթէ յանկարծ սրահի դուռը չը բացուէր։ Ամենքը լռեցին և նոր ներս մտնողին նայեցին։

Դա մի նիհար երիտասարդ էր, խիստ դժգոյն դէմքով, մեծ խոր գնացած աչքերով, մորուքը կլոր և թանձր, ընչացքը կարճ, մազերը սակաւ, սակայն ճակատը լայն և մի քանի խորշումներով զարդարուած։ Ներս մտնելուն պէս կանգ առաւ և շարուածի պէս գիտական ակումբի անդամներին նայեց։

—Ա՛հ, գոչեց ակումբի նախագահը վեր ցատկելով տեղից—Արտաշէսն է... Եւ դէն շպրտեց ձեռքի զանգակը, վազելով իջաւ ամբիոնից, մօտեցաւ ներս մտնողին, բռնեց նրա ձեռքից և դառնալով միւսներին՝ ասաց։

---

[1]) Ծափահարեցէք, քաղաքացի՛ք։

—Պարոննե՛ր, ներկայացնում եմ ձեզ, գաւառացի ուսուցիչ Արտաշէս Մխիթեանին։

—Սոքա մեր ժողովի անդամներն են, դարձաւ նա ուսուցչին—իրաւաբանական, բժշկական, Սուլթանիէ, Համիտիէ և այլ համալսարանների ուսանողներ, ոմանք աւարտելու մօտ և ոմանք երկրորդ կամ երրորդ կուրսի։

Արտաշէսը լռութեամբ բոլորին գլուխ տուեց, յետոյ չորս կողմը նայեց և խուլ ձայնով հարցրեց։

—Դուք նիստ ունէիք, ես չը խաւնե՞ցի։

—Օ՛, ո՛չ, պատասխանեց Արշակը—եթէ կուզես, նստիր և լսիր, մենք կը շարունակենք... և, ժպտեց նա—լաւ որ եկար, քիչ էր մնացել իրարու ծեծէին. նստեցէ՛ք, յարեց նա ամբիոնը ելնելով—նիստը բացվում է. մեր ընկերութեան անունը դրել ենք գիտական ակումբ, առաջարկում եմ կամ այդ անունը փոխել և կամ թէ լոկ գիտական բաներով զբաղելու, գիտական դասախօսութիւններ անելու լսարաններ հաստատելու, և այլն նպատակը ընտրենք լայնածաւալ մտքով. այդ նպատակը իւր մէջ բովանդակում է օգնել գիտութիւն ծարաւ աղքատ երիտասարդներին, բանակուիներից ազատ մի գիտական թերթ հրատարակել, գիտութիւնը մատչելի լեզուով մտցնել ժողովրդեան մէջ և այլն. այս նպատակը, ըստ իս, շատ յարմար է, ապա թէ ոչ անունը պիտի փոխել. մինչդեռ այդ անունը դնելով մեր գլխաւոր միտքն է եղել գիտութիւնները տարածել. ես վերջացրի պարոննե՛ր, յոյս ունեմ, որ բոլորդ էլ համամիտ կը լինէք ինձ, ուստի խօսէ թող, ով կամենում է։

—Խօսք կուզեմ, ասաց Լեոնը։

—Խօսքը ձերն է։

—Մտածե՞լ էք արդեօք թէ մենք որչափ ոյժ ունենք այդ նպատակը իրագործելու համար. մենք նոյն իսկ մեր մէջ ոչ մի գիտութեան հետ կատարեալ ծանօթներ չունենք և...

—Մեղանչում ես, գոռաց Ռաֆայէլը ցատկելով տեղից—մեր մէջ կան անձինք, որոնք շուտով կը ստանան իրաւաբանական կամ այլ գիտութեանց կատարեալ ծանօթ լինելու վկայականներս ես էգուց երբ վկայականը ստանամ, իսկոյն պիտի ձեռնարկեմ մի բրոշիւրի, որի մէջ պիտի ցոյց տամ թէ մեր ազգը որչափ ճնաներ է

կրում Նորանից, որ ծանօթ չէ, Գիզօի և այլ հանճարների հետ։

—Մանաւանդ Ռաֆայէլ էֆէնդիի հետ։

—Այո՛, շարունակեց Ռաֆայէլը խրոխտ ձայնով—եւրոպական հանճարների հետ մեր ազգը ծանօթ չէ և դորա համար է, որ նա միշտ ֆնասւում է, միշտ ծաղրելի է լինում։

—Si, mon cher ami... [1]) լսեց յանկարծ դռան կողմից մի ձայն—C'est juste. Comme vous voulez [2]). ես համամիտ եմ իմ բարեկամ, սիրելի Ռաֆայէլ էֆէնդիի հետ. բարև ձեզ, messieurs, mon cher ami, Ռաֆայէլ էֆէնդի՛ս, vous parlez comme un avocat, je vous felcite [3])։

Վահրամ Քաջբերունին էր դա. փայտը անկիւնը դրաւ, այդ խօսքերը ասելով հանեց ձեռնոցները, կլորեց դրաւ գլխարկի մէջ, գլխարկն էլ դրաւ մի սթոռի վրայ և եկաւ նստելու Ռաֆայէլ էֆէնդիի մօտ, որը ժպտեց նրան և պատասխանեց։

—Merci, cher Vahram.

—Սա՛լթ [4]), մեմեաց Լեոնը—խուփը դլորաւ, պուտուկը գտաւ։

Այդ խօսքերը միայն նրա կողքիններրը լսեցին, իսկ Վահրամը սկսեց այդ միջոցին մի ֆրանսերէն խօսակցութիւն Ռաֆայէլի հետ։

Կէս ժամից յետոյ ժողովը վերջացել էր. ամենքը ոտքի ելան, Վահրամը շարունակելով իւր ֆրանսերէն խօսակցութիւնը, մտաւ Ռաֆայէլի թեւը և քաշեց մի կողմ. Արշակը Արտաշէսի հետ՝ և բոլորը սկսեցին ցած իջնել։

Գիտական ակումբը վճռել էր իւր նպատակը՝ գիտութիւնը ընտրել և երկու հոդուց բաղկացած մի մասնախումբ էր կազմել ծրագրելու կանոնադրութիւնը, մինչև մի շաբաթ։

Ակում էր մթնանալ. ուսանողները սրճատուն իջան աղմկալից և պատրաստուեցան մեկնելու։

---

[1]) Հէնց այդպէս է, սիրելի բարեկամ։ [2]) Ճիշտ է. ինչպէս որ կուզէք (какъ хотите)։ [3]) Դուք խօսում էք փաստաբանի պէս... շնորհաւորում եմ։ [4]) Իսկ և իսկ։

Ե

ՎԻԿՏՈՐ ՀԻԳՈՅԻ ՍԵՐԵՆԱԴԸ

—Non, non. je vous assure [1]), դուք կարող էք նայել, ես ալ կարդացել եմ Գիզոյէն, je panse que [2]), դիտէ՞ք ա՛, մեր այս siècle gaté-ի [3]) մէջ c'est l'unique moyen [4])։

—Pardon, pardon, monsieur Vahrám, ներեցէք, դուք իրաւաբանութեան ուսանող չէք, vous n'êtes pas juriste [5]), ի հարկէ, դուք չը գիտէք թէ ի՞նչ հրաշալի, politique charmante [6]), սքանչելի քաղաքականութիւն է այդ...

—Mais, mais, mon cher ami, բացականչեց Վահրամը ձեռքերը տատանելով օդի մէջ. je crois que moi aussi [7]) կարող եմ գրքեր կարդալ. des livres politique [8]). ես ալ կրնամ comprendre une chose [9])։

—Sans doute [10]), ի հարկէ, գոռաց Իսֆայէլ էֆէնդին—դուք կարդում էք, այդ ես գիտեմ, տեսել եմ ձեր գրքերը, բայց մենք իրաւաբաններս...

Եւ այսպէս երկու բարեկամները միմեանց թեւ մտած՝ վերից ներքև էին իջնում ձեռքերով օդը սղոցելով, միմեանց հրաբորբոք ակնարկներ ձգելով, աստիճանների անկիւններին կանգ առնելով և որը գլխաւորն է, միմեանց խօսքը անդադար միջահատելով.

Նոցա առջևիցը ցած էին իջնում Լևոնը մի Համիտիէ դպրոցի ուսանողի թևը մտած, իսկ ետևից գալիս էին Արշակը Արտաշէսի հետ և այսպէս զոյգ զոյգ անդադար վիճելով և զոռգոռալով մտան սրահը, այնտեղ ուշադրութիւն իսկ չը դարձրին բողոքական սրճագործի խօսքերին «փոքր ինչ կամաց խոսելու», անցան սեղանների մօտից, իրանց քղանցքներով գետին թափեցին լրագիրները և զոյգ զոյգ կանգ առին փողոցի մայթի վրայ։

Այստեղ Լևոնը բաժանուեց իւր խօսակցից և անցնելով փողոցի

---

[1]) Ո՛չ, ո՛չ, հաւատացնում եմ ձեզ։ [2]) Կարծում եմ։ [3]) Փչացած դար։ [4]) Միակ միջոցն է։ [5]) Դուք իրաւաբան չէք։ [6]) Հիանալի պոլիտիկա։ [7]) Կարծեմ ես էլ։ [8]) Կարդալ պոլիտիկական գրքեր։ [9]) Մի բան հասկանալ։ [10]) Անկասկած։

պիմացի կողմը, սպասեց թէ իրան ով կընկերանար դէպի տուն։ Արշակը Արտաշէսի հետ թոթվելուց յետոյ միւսների ձեռքը, գնացին դէպի Կում-Կապուի կայարանը և Լէոնը տեսնելով որ մայթի վրայ մնացած Իսֆայէլ և Վահրամը դեռ ևս վիճում էին, սկսեց քայլել դէպի Կէտիկ փաշա։

—Սպասիր՝, attendez [1]). monsieur Léon, գոչեց նրա ետևից Վահրամը։

Նոքա սկսեցին բարձրանալ Կէտիկփաշայի զառիվերը. Վահրամը դրպանից հանեց մի արծաթեայ տուփ, նրա միջից էլ մի պապիրոս, վառեց, մի քանի կում ծխեց և երբ դեղարանի առջևիցը անցնում էին, հարցրեց Լէոնին։

—Դուք տուն էք գնում, այնպէս չէ՞։

—Այո՛, շուտով կը միանանայ, փոքր ինչ գծելու բան ունիմ։

—Oui, yes. պէտք է գործը լրացնել, il faut mon ami [2]). գնանք միասին, ես ձեր տան առջևից կանցնեմ։

—Իսկ դուք, ո՞ւր էք գնալու։

—Փէրա. քիչ մը, սանկ, գործեր ունիմ։

Եւ լռեցին այլ ևս ու լռութեամբ անցան մինչև այն փողոցը, որը ուղղակի տանում էր դէպի Լէոնենց տունը։ Դա երկայրկ 3 մետր բարձրութեամբ մի փոքրիկ տուն էր, փողոցի լուսամուտները բաց էին և փողոցի ծայրից իսկ լսում էր դաշնամուրի ձայն։

—Օ՛, գոչեց Վահրամը—ածում են, այս չէ՞ ձեր փողոցը, ո՞վ է ածողը։

—Քոյրս է։

—Օ՛, c'est votre soeur? [3]) ուրախ եմ; հիանալի է ածում, elle joue comme il faut, attendez... ó, très charmant, merveille [4]) և բռնելով Լէոնի—ժպտող Լէոնի թևից, կանգ առաւ փողոցի մէջ տեղ, ականջը այն կողմը դարձրեց։

—Օ՛, oui, c'est celui-la. գոչեց նա, c'est la sérénade de Victor-Hugo [5]). այո՛, «Quand tu chante tes berceuses» [6]), հիա-

---

[1]) Սպասելիք։ [2]) Պէտք է, բարեկամ։ [3]) Ձեր քոյրն է։ [4]) Հիանալի, գովելիք։ [5]) օ, այո, հէնց նա է, Վիկտոր-Հիւգոյի սերենադն է։ [6]) Երգի կատոր է. սիրբ երգում ես քո օրօրոցի երգը»։

նալի է ածում, «dans mes bras» [1]), լսեցէ՛ք. oui mon ami. c'est merveille [2]). գիտէ՞ք, մսիւ Լեոն, յարեց թողնելով Լեոնի թեւը—գիտէ՞ք, որ ձեր քոյրը ածում է ինչպէս մի արտիստ։

Մօտեցան դրան, Լեոնը կամեցաւ զանգը քաշել։

—Attendez, բռնեց նրա թեւը Վահրամը—օ՛, լսեցէք խնդրեմ։ «chantez, chantez, mon ange», բրաւօ, բրաւիսիմօ գոռաց նա, հիանալի է... օ՛հ, կը լսէ՞ք. «dormez, dormez mon ange» [3]), մսիւ Լեո՛ն, ձեր քոյրը տաղանդ ունի, յարեց լուրջ դէմքով և աչքերը մեծ մեծ բանալով—այո՛, mon ami, ձեր քոյրը տաղանդ ունի... ո՛հ, որ գիտենաք... այո՛, որչա՛փ կը սիրեմ այդ սիրենադը. «chantez, chantez mon ange». անչա՛փ կը սիրեմ... մսիւ Լեո՛ն, խնդրեմ ներս գնացէք և խնդրէք որ շարունակէ... շա՛տ կը սիրեմ այդ կտորը «dormez, dormez mon ange»։

—Համեցէք ներս գնանք, կէս բերնով ասաց Լեոնը։

Լեոնը զանգը քաշեց, դուռը իսկոյն բացուեց. նոքա ներս մտան։

—Միլլերին ճանաչո՞ւմ էք, շարունակեց Վահրամը. նօտայի մէջ «Սավան տ՝էր» (նա ֆրանսերէն savant [4]) բառի t գիրը միացնում էր հայերէն «էր» բայի հետ) comme il faut [5]). վեց ամիս գաս առի ես, սովորեցայ ամէն ինչ, սկսած գամերէն մինչև թրիմ օլօներ».

—Գիտեմ, գիտեմ, միջահատեց Լեոնը. բոլորն էլ գիտեն, որ մսիւ Վահրամը առաջինն է Վիօլոնիստների մէջ, նորա նւագելը զմայլեցնում է բոլորին և նրա արշէն ցատկոտում է լարերի վրայ և թռթռեցնում en merveille։

—N'est-ce pas? [6])? աւելացրեց Վահրամը, բայց խօսքը դրանով վերջացրեց, որովհետև երկրորդ յարկի սենեակի դրան մօտ կանգնած տեսաւ Վիրժինին, որը զարմացած նրանց էր նայում։ Մսիւ Վահրամը իսկոյն գլխարկը ցած առաւ, վազեց դէպի Վիրժինը, բռնեց նորա ձեռքը և մի փաղաքշուտ ժպիտ դէմքին, ասաց ֆրանսերէն։

---

[1]) Երգի կտոր է։ [2]) Հիանալի է։ [3]) Երգի կտոր է։ [4]) Գիտուն։ [5]) Ինչպէս պէտք է։ [6]) Այնպէս չէ՞։

—Ներեցէ՛ք, օրիո՛րդ, որ առանց ձեր առանձին հրամանի, համարձակուեցի գալ տեսնելու ձեզ և լսելու ձեր զմայլեցուցիչ նուագելը, դուք նուագում էք արտիստի նման, ձեր մատները կայծակի արագութեամբ են սահում լեզուակների վրայ, օ՛հ, ի՛նչ հիանալի ածում էք Վիկտոր Հիւգոի սերենատը, որը ես անհուն կերպով սիրում եմ։ Վիրժինը նախ ժպտեց, յետոյ հազիւ հազ իւր ձեռքը ազատեց Վահրամի սեղմող ձեռքից և ասաց ներս մտնելով։

—Հաւեցէ՛ք, իրաւունք ունիք, այդ սիրենատը զմայլեցուցիչ բան է։

—Ուալա՛, ահաւասիկ, դարձաւ Վահրամը Լեոնին—ձեր մտքմտազէլ քոյրը համամիտ է ինձի և ես, յարեց նա Վիրժինին դառնալով—այնքան զմայլեցի, որ մոռայ ձեր նուագելը աւելի մօտից լսելու։

—Շատ ուրախ եմ, նստեցէ՛ք. ես լսել եմ որ դուք էլ Վիոլոնի վրայ էք ածում։

—Է՛հ, սանկ, քիչ մը, մուա օսի, կը նուագրեմ այդ սերենատը, mais, mademoiselle, vous, vous jouez comme une grande artiste [1])։

—Vous me flattez [2]), ժպտեց Վիրժինը և նստաւ դաշնամուրի առջև։

Նուագելու ժամանակ Վահրամը կատարելապէս դերասանութիւն էր անում, մատները մազերի մէջ կոխում, դէմքը ծռմռկում, յետոյ մի սիրագին ակնարկ սևեռում հայելիի մէջ, ուրի էր ելնում և նուագելու հետ մի կատոր երգում, գլուխը երերցնում և «óh, merveille, charmante» բացականչում և այդ բոլորը նա այնքան ծիծաղելի ծամածռութիւններով համեմում էր, որ Լեոնը ստիպուեց դլուխը լուսամուտից դուրս հանել, որպէս զի իւր լուս քրքիջը չը տեսնուի։

Երբ վերջացաւ, Վահրամը մօտ վազեց Վիրժինիին, ֆրանսերէնով խաուն, փքուն բառերով լիքը, մի «կոմպլիմէնտ»ով շնորհակալ եղաւ նրան և կանգ առնելով դաշնամուրի կողքին՝ սկսել էր թերթել նոտաները։ Լեոնը դիտում էր նրան և քիչ էր մնում մեռնէր լուս ծիծաղից, որովհետև հոսոսը նոտայի իւրաքանչիւր տեսակը առ-

---

[1]) Բայց օրիորդ, դուք, դուք ածում էք մի արտիստի նման։ [2]) Դուք ինձ չողոքորթում էք։

նում էր ձեռքը, երեսը բարձրաձայն կարդում, յետոյ թերթելով միջից կտորներ էր երգում, երգածները կիսատ թողնելով, Վիրժինին հարցնում էր, թէ գի՞տէ այդ կտորները։

—O', voilà, գոչում էր նա աչքերը մեծ մեծ բանալով. c'est la Traviata. հիանալի է վալսը, տո լա, լա տո լա, լա տո լա, լասիլա, սոլլա տո, տո սիլա... այո՛, հիանալի է. իսկ դուք, մադմազէլ, խնդրեմ, մադմազէլ, աս կտորը մէյ մը նւագէք։

Եւ դրաւ գաշնամուրի կայանի վրայ, Վիրժինը սկսեց նւագել, մինչդեռ Վահրամը ձեռքն էր առել մի ուրիշ տետր և թերթում էր և երբ օրիորդը վերջացրեց, նա ժպտեց և գոչեց։

—Դուք արտիստ էք, մադմազէլ, ձեզպէս նւագողի սակաւ եմ հանդիպեր. voilà, une autre pièce... ó, ó, ó, c'est le Faust. դուք գիտէ՞ք մադմազէլ սա կտորը. սի ֆա սի տո ռէ սի տո տո ֆա. անշուշտ գիտէք, օ՛, որչա՛փ նոտաներ ունիք և որչափ ընտիրները. Lucrecia, Borgia de Donizetti. La sunnambula de Bellini .. ó, ó, ó. voilà le Romeo et Juliette, Othello, Rigoletto, ասոնք բոլորն ալ լսեր եմ ու տեսեր, հիանալի են։

Լևոնը, որ այլ ևս ձանձրանալ սկսեց այդ լեզուից, յանկարծ միջահատեց նրան և գոչեց.

—Քիչ մը երգէ, մսիւ Վահրա՛մ, սա սերենադը քիչ մը երգէ։